

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ.Ի կյանքն ու գործունեությունը սիրտորեն կապված է Հայ Օկեղեցու վերջին հիսնամյակում տեղի ունեցած պատմական խոշոր իրադարձությունների հետ: Սկսած 1895 թվից մինչև այսօր, նա նվիրված է մեր ժողովրդի հասարակական, եկեղեցական և կրթական ազգագույն գործին: 60 տարվա բեղմնավոր գործունեության մի փայլուն ժամանակաշրջան լուսապսակ է կապել ծերունազարդ Հայրապետի պայծառ ճակատին: Նորին Ս. Օծուխյան կյանքն ու գործունեությունը առանձնապես ուսանելի և նշանակալից է նրանով, որ նա մի հիսնամյակ անշեղորեն և կորովի քայլել է իր ժողովրդի հետ, բաժանելով նրա վիշտն ու ուրախությունը, լինելով միշտ ժողովրդի մեջ և ժողովրդի հետ, գործելով նրա օգտի համար:

Հավատացյալ ժողովուրդը բարձր գնահատելով նրա արժանիքներն ու առաքինությունները, 1945 թվին Ս. Էջմիածնում գումարված Համազգային ժողովում, միաձայնությամբ ընտրեց նրան Ամենայն Հայոց Հայրապետ: Այդ ընտրությամբ իսկ հայ ժողովուրդը արժանավորեց այն մեծ ծառայությունը, որ Նորին Ս. Օծուխյանը մատուցել է մեր եկեղեցուն և մեր Հայրենիքին:

Նորին Ս. Օծուխյան արժանիքները բազմաթիվ են և կարոտ հատուկ ուսումնասիրության: Նա հայ հայրենասեր հոգևորականի օրինակելի կերպարն է: Ազգային միասնականությունը, հայրենադարձը և Սովետական Հայրենիքի բարօրությունն ու հառաջդիմությունը կազմել են նրա ամենօրյա խոհերի ու մտահղացումների առարկան: Այս իսկ տեսակետից, նա չի խնայել իր ուժերը, գոհաբերություններն ու եռանդը, իր եկեղեցու և իր Հայրենիքի համար: Այս է կազմում Նորին Ս. Օծուխյան, գործունեության բնորոշ կողմերը, այս է կազմում Հայաստանյայց եկեղեցու փառքը:

Վերահիշյալ հանգամանքները ավելի քան ակնառու և շեշտակիորեն տեսանելի և շոշափելի կդառնան, երբ անցնենք այն փառապանծ ճանապարհի քննությանը, որով Նորին Ս. Օծուխյանը անցրել է իր բեղմնավոր 60 տարին:

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ. ընկել է 1869 թվի դեկտեմբերի 2-ին, Ռոստով-Կոնստանտնուպոլիսի Նոր Նախիջևան քաղաքում, փախանազոր զորահրամանատար ընտանիքում: Նրա հայրը՝ խաչատուր Աբրահամյանի Չորեքչյանը, փախանազոր էր և այդպես արհեստը սովորել էր իր հոր՝ Աբրահամյանի մոտ: Չորեքչյան ընտանիքը մի քանի սերունդ պահպանել է արհեստավորի կյանքը, և արհեստը ժառանգաբար ուսուցանել հաջորդներին: Միանգամայն հասկանալի է, որ զորահրամանատարական, աշխատավորական հոգեբանությամբ պարուրված ընտանիքում անվտանգ ու մեծացող մանուկ Գեորգը կարող էր դժգոհ ժառանգել և յուրացնել ժողովրդասիրություն և աշխատավորությանը հատուկ ուրույն հոգեբանություն ու ձգտումներ:

1860-ական թվականներին Նոր Նախիջևանի հայ համայնքը հայտնի էր իր ավանդադատությամբ, եկեղեցասիրությամբ և հայ ժողովրդին ու նրա շահերին անսահման նվիրվածությամբ ու զոհաբերությամբ: Նա տոգորված էր Մայր Աթոռի պահպանմամբ, Հայ եկեղեցու հառաջդիմությամբ և ազգային անվտանգության ու սովորությունների պահպանմամբ: Այս էր կազմում քաղաքի այն ժամանակվա հոգևոր սնունդը, արանով էին շնչում բոլորը և ամեն մի տուն և ընտանիք տարված էր այս իղձերով ու ցանկություններով: Մյուս կողմից, նախիջևանցիների փակ կյանքը և ազգային ավանդություններին ու սովորություններին կառչած մնալու հատուկ նախանձախնդրությունը համակված կրոնական հասկացողություններով և աստվածային երկյուղածությամբ, բնականաբար, իրենց

դրոշմը պիտի դնեին մանուկ Գեորգի հոգեկանի վրա և ամեն կերպ պիտի նպաստեին նրա ունակությունների զարգացմանը՝ ազգային-կրոնական ուղղությամբ:

Մանուկ Չորեքյանի մայրը՝ Կատարինե Չորեքյանը, որ բնիկ Նախիջևանից էր և սնված ու դաստիարակված էր բացառապես Հայ եկեղեցու և հայ ժողովրդի ավանդական սովորություններով, իր ազդեցությամբ կնիքը դրեց մանկան վրա, ներշնչելով նրան իր զգացմունքն ու հավատքը:

Որ ժողովրդասիրությունը, կարոտյալներին օգնելու և մխիթարելու ամենօրյա ջանքերը, եկեղեցասիրությունը և անսահման հավատքը, իրենց խորը տպավորությունը թողին մանկան հոգում:

Մանկան հոգեկան կյանքի զարգացման վրա ազդեց նաև իր պապի՝ Աբրահամ Չորեքյանի կենցաղը: Նա շուտով ընտանիքի պահպանման հոգսը թողեց որդուն՝ խաչատուր Չորեքյանին, որը ոչ միայն յուրացրել, այլ և զգալի կերպով զարգացրել էր փակա-նագործի արհեստը, և ինքը նվիրվեց իր թոռան՝ մանուկ Գեորգի դաստիարակությանը:

Աբրահամ պապի ամենօրյա զրույցները, ազգային և կրոնական կյանքի շուրջը հայ ժողովրդի պատմության փոքրիկ դրվագները, առածներն ու առակները և նրա կրոնական և ավանդապաշտական համոզմունքները, իրենց տեղը գտան մանկան սրտի մեջ: Մինչ այդ, 6 տարեկան Գեորգը սկսել էր հաճախել Նախիջևանի ծխական դպրոցը:

Դպրոցն, իր հերթին, մանկան մեջ պիտի ամրացնեք այն, ինչ նա արդեն ժառանգել էր նահապետական սովորություններով և կրոնական ցեղանկարչությամբ սնված ընտանիքից ու միջավայրից: Բնը տարեկան հասակում, փայլուն հառաչդիմությամբ, ավարտելով Նոր Նախիջևանի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցը, պատանի Գեորգը ընդունվում է տեղական հոգևոր սեմինարիայի առաջին դասարանը:

Այս նույն ժամանակամիջոցում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, երջանկահալչառակ Ս. Տ. Գեորգ Դ. Կաթողիկոսի ջանքերով, տեղի էին ունենում զգալի բարեփոխություններ. բացված էր Ս. Էջմիածնի Հայոց Հոգևոր Ճեմարանը, տպագրվում էին եկեղեցական գրքեր, ռադամասիրվում և հրատարակության էր տրվում Հայ եկեղեցու երաժշտությունը, առանձին խնամքի և վերաճարկման էր ենթարկվում Ս. Պատարագի երգեցողությունը և այլն: Հետաքրքրությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նրա գործունեությունը համատարած էր և ընդհանուր:

Նոր Նախիջևանի հայկական գաղութը, որ կարելի է ասել, առաջնակարգ գաղութներից

մեկն էր, շնորհիվ իր հայրենասիրական և հանրօգուտ ձեռնարկությունների և մշտական ու հարատև զոհաբերությունների, ստացել էր մեծ հռչակ: Այս գաղութի ձայնը լսելի էր ամենուրեք: Ազգային կյանքը իր մշտադեմ եռուզեռի մեջ էր՝ շնորհիվ գաղութի հառաչդիմական հոսանքների և նվիրված, գաղափարական անհատների: Կաթողիկոսության ամեն մի քայլն ու որոշումը, ամեն մի կողմ իր անմիջական արձագանքն էր գտնում գաղութում և հանգում արդյունավոր վերջավորության: Գաղութը կյանված էր այն ամենով, ինչ որ ազգային էր, հայկական ու ժողովրդական:

Բնական է, որ այս հակումները պետք է հափշտակեին նաև ապագա ականավոր եկեղեցականի և մեծագործ Կաթողիկոսի սիրտն ու հոգին և պիտի կերպարեն նրա մեջ հայի տիպարը, շոմշն ու ոգին:

Ուստի ամենեկին զարմանալի չպիտի թվա, որ Չորեքյանը երիտասարդ հասակից բավականաչափ կազմավորված մարդ էր իր ազգային տոգորումներով և ըմբռնումներով, իր ավյունով ու ներշնչումներով: Նոր Նախիջևանի հայ գաղութը Գեորգյան ձեռնարանում մշտապես պահում էր 5 թոշակառու ուսանող, յուրաքանչյուր տարի վճարելով 1.500 ռ. դրամ:

Ճեմարան էին ուղարկվում, ընդհանրապես, ծխական դպրոցները հաջող ավարտած ընդունակ երեխաներ, որոնք ընդունվում էին Ճեմարան հատուկ քննություն տալուց հետո միայն:

Աբրահամ Չորեքյանը, որը անչափ սիրում էր իր թոռին և խորհում նրա ապագայի մասին և որի խորաթափանց հայացքը արթնն ընդգրկել էր երեխայի ընդունակությունները, որոշում է մանուկ Գեորգին տանել Ճեմարան:

Նվ ահա 1880 թվին Չորեքյանն ընդունվում է Ճեմարան և 1889 թվին ավարտում նրա լրիվ դասընթացը:

Գեորգ Դ.ի հիմնած Ճեմարանը՝ Արշակ Նահապետյանի տեսչությամբ և Օրմանյան Սրբազանի կրոնա-պատմական առարկաների դասավանդությամբ, հետևում էր լույս ազգային-կրոնական նպատակների և Ճեմարանում դաստիարակությունը տարվում էր այդ ուղղությամբ:

Այդպիսի հետևողական դաստիարակությունը, բնական է, պիտի տար իր արդյունքները: Նվ ահա 1889 թվին նորաձևորտ Գեորգ Չորեքյանը, Գարեգին Հովսեփյանը (ներկայումս Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ Կաթողիկոս), և տեսուչ Արշակ Նահապետ-

յանը ընդունում են հոգևոր կոչում՝ ձեռնադրվելով սարկավագ։

Ավարտելով ձեմարանը, Չորեքյանը որոշում է վերադառնալ Նոր Նախիջևան և զբաղվել մանուկ սերնդի դաստիարակությամբ, ծխական դպրոցում ստանձնելով ուսուցչի համեստ պաշտոն։ Սակայն ձեմարանի վարչության աչքից չեն անցնում նրա ընդունակությունները և նա առաջարկ է ստանում վարչությունից՝ մեկնել արտասահման և հետևել քարձրագույն կրթության։ Չորեքյանի ուսանողական ժամանակաշրջանի տենչերը դառնում են իրականություն և նա մեկնում է Լայպցիգ՝ իր կրթությունը շարունակելու։

Լայպցիգում նա ընդունվում է համալսարան և հետևում է երկու ֆակուլտետների առարկաներին՝ աստվածաբանականին և փիլիսոփայականին, ու մեկ տարի նախապատրաստվելուց հետո, ընդունվում է Լայպցիգի կոնսերվատորիան՝ որպես իսկական ուսանող։

Ավարտելով Լայպցիգի համալսարանը 1894-ին, Գեորգ Սարկավագը վերադառնում է Ս. Էջմիածին և Գեորգյան ձեմարանում ստանձնում երաժշտության դասատվությունը։ Մեկ տարի ձեմարանում պաշտոնավարելուց հետո, 1895 թվին, տեղափոխվում է Նոր Նախիջևան և տեղի հոգևոր սեմինարիայում դասավանդում երաժշտություն, եկեղեցական պատմություն և բարոյագիտություն։

Մտնելով ուսուցչական ասպարեզ, Չորեքյան Սարկավագը նվիրվածությամբ շարունակում է հայ ուսուցչի պատվավոր կոչումը, երաժշտության դասեր տալով նաև Նոր Նախիջևանի հայկական Կոստյան օրիորդաց դպրոցում և բոլորում է մի բեղուն ժամանակաշրջան՝ 1894-ից մինչև 1913 թվի, շուրջ 19 տարի։

1913 թվականը լեկվաճառ տարի է հանդիսանում Սարկավագ Չորեքյանի վյանքում։ Գեորգ Ս. Կաթողիկոսի դիվանագետ Բազդրատ արքեպիսկոպոսը հեռազրույց հաղորդում է նրան՝ ներկայանալ Կաթողիկոսին։

Չորեքյան Սարկավագը շտապում է կատարել վեհապատ Հայրապետի վամբը և հասնելով Էջմիածին՝ ներկայանում է Վեհին։ Գեորգ Ս. ը դիմում է նրան հետևել խոսքերով. «Բեզ հրավիրել եմ հատուկ գործի համար, սակայն պիտի խոսք տաս՝ ասածս կատարել և եթե կիրստանաս, նոր միայն կհայտնեմ վանքերու նպատակը»։ Չորեքյանն ըմբռնում է գործի էությունը և առանց տատանվելու պատասխանում է.

«Այն օրը, երբ ես թողնեի ձեմարանը և վանք մտա, Հայոց Հայրապետին համա-

տարմություն ուխտեցի. հրամայեցե՛ք, տարեմ»։

Կաթողիկոսը շարունակում է. «Որոշե՞քեզ վարդապետ ձեռնադրել և առաջնորդական փոխանորդ նշանակել Նոր Նախիջևանում։ Ասում էին, որ դու քո հարմարությունները չես թողնի ու չես դա»։

— Ինչ որ ասել են, այդ եղել է նրա համոզմունքը, իսկ իմ համոզմունքը ես տարարեցի, — պատասխանում է Սարկավագ Չորեքյանը։

Այնուհետև, Չորեքյանը հարցնում է Վեհապետից՝ թե որքա՞ն նպատակահարյուկլիսի առաջնորդական փոխանորդ նշանակել մի վայրում, ուր ինքը երկար տարի եղել է քահանաներին ստորադաս սարկավագ։

Կաթողիկոսը հարտնում է.

— Քո մասին իմ ստացած տեղեկություններն արևքան դրական են, որ ամենևին կատարվածում, որ դու պատվով կկատարե՞ս պաշտոնը թե՛ քեզ, թե՛ Մայր Աթոռ Ս. Եփրեմի համար։

Սլ ահա նույն 1913 թվի ամառը, հունիսին, Չորեքյանը ձեռնադրվում է վարդապետ և Ներքին գործերի նախարարի մաձայնությունն ստանալով, նույն 1. թվի նոյեմբերին մեկնում է Նոր Նախիջևան և անցնում առաջնորդական փոխանորդ պարտականությունների կատարմանը։

Չորեքյանի առաջնորդական գործունեությունը զուգադիպում է ցարական ռեակցիոն ուժեղացմանը Կովկասում։ Տեղական վաքականությունները և համայնքները խնայրողված էին ցարական կառավարության վարմունքից և պաքարում էին իրենց գալին ինքնուրույնությունը պահելու համար։ Պաքարը գնում էր կրոնի, լեզվի, ազգայնությունների և ավանդությունների պապանման և զարգացման ուղղությամբ։ Չորեքյանն սկսում է ծավալել ծխական դպրոցների ցանցը, ուսուցանել և զարգացնել մեթոդներ լեզվի դասավանդությունը և տարածումը, գաղութը կապված պահել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ և բոլոր բարեգործական կրթական, կրոնական հաստատություններում համաժամեք Ամենայն Հայոց Կաթողիկոսության շուրջը՝ նոր շունչ ու ոգի ներշնչել այդ ընկերություններին և մղելով նրանց պի գոհարեություն, դեպի ազգային փոքրամասնությունների իրավունքների անաղաղ պաշտպանությունը և պահպանումը։

Այս իսկ հողի վրա նա բազմաթիվ գամներ ընդհարումներ է ունենում տեղական իշխանության ներկայացուցիչների հետ՝ կրում է շատ անախորժություններ, բազմ

այնուամենայնիվ, շարունակում է սկսած աշխատանքները՝ հանուն հայ ժողովրդի իրավունքների պահպանման: Հաղթանակը մնում է Չորեքչյանին: Նոր Նախիջևանի հայությունը ապրում է իր կրթական և կուլտուրական կյանքի վերելքը:

Կովկասյան ճակատում թրքական հրոսակներ

Ս. Էջմիածնի միաբանությունը և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը չէին կարող իրենց ջուլների և եղբայրների տառապանքների հանդեպ լուկ ականատեսի դերում մնալ: Եվ ահա 1915 թվին Ս. Էջմիածնում կայանում է մի համագումար՝ օգնությունը կազմակերպելու համար: Ամենուրեք



Ամենայն Հայոց Հայրապետը Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ եղած ժամանակ, 1913 թ.:

րի մոլեգնությունը, առաջին հերթին, պայթում է անգլիկ և անպաշտպան հայության գլխին: Սկսվում է անասելի հալածանք, կողոպուտ և կոտորած հայերի դեմ: Փոքրաթիվ բեկորները ապաստանում են Կովկասի մոտակա սահմանամերձ վայրերը, գլխավորապես Երևանի և Կարսի շրջանները, այնտեղ որոնելով փրկություն և կյանքի ապահովություն:

Հիմնվում են եղբայրական օգնության կոմիտեներ, որոնք սկսում են զբաղվել գաղթականության տեղավորման, մատակարարման և առողջապահական հարցերով: Կարիքը օրեցօր շատանում էր: Ընչազուրկների, որբերի և անապաստանների թիվը ահռելի չափերի էր հասնում: Անհրաժեշտ էր արագ գոր-

ծունեություն, ժրջան աշխատանք, խնամք և հոգածություն:

Այս իսկ պահանջներից ելնելով, 1916 թվին Գեորգ Ե. Երզնկայի վարդապետին վերադառնալ էջմիածին: Նա նշանակվում է Սինոդի անդամ և Ս. էջմիածնի ու Երևանի եղբայրական օգնության մասնաճյուղերի նախագահ:

Նույն միջոցին Գեորգ Ե. Կաթողիկոսը գտնվում էր Թբիլիսիում: Չորեքշաբթի վարդապետը ներկայանալով Վեհին՝ իրազեկ է դառնում իր նոր պաշտոններին ու պարտականություններին: Նա բարձր է համարում մի քանի օր մնալ Թբիլիսի և ծանոթանալ եղբայրական օգնության կենտրոնական վարչության գործերի ու աշխատանքների հետ: Չորեքշաբթի վարդապետի համար պարզվում է, որ եղբայրական օգնության գործերը թողնված են բախտին և պատահականության, ինչպես օրինակ, հայտնի է դառնում, որ գաղթականության համար պատվիրված են տասնյակ վագոններով կենսամթերքներ և այլ իրեր, որոնց դրամները լրիվ կերպով վճարել են, բայց, այնուամենայնիվ, ապրանքները չեն ստացվում: Չորեքշաբթի վարդապետը իր սեպուհ պարտականությունն է համարում նախ և առաջ լուծել այս կնճիոր և գաղթականությանը կենսամթերք հասցնել:

Նրա ձեռք առած հետապնդումների և կտրուկ ջանքերի շնորհիվ, դրությունը փոխվում է. 1917 թվին պարենի և մթերքների հոսանքը շուտ է գալիս դեպի Երևան ու էջմիածին: Միաժամանակ նոր պատվերներ են տրվում գաղթականության կարիքների համաձայն:

Գաղթականության՝ պարենավորումը կազմակերպելով, Չորեքշաբթի վարդապետը ի հայտ է բերում իր կազմակերպչական և տնտեսական մեծ ընդունակությունները: Նա կրճատում է վերադիր վճարները, ապահովում է մթերքների շտապ տեղափոխությունը, վագոնների դատարկումը, կազմակերպում է հատուկ փոխադրական միջոցներ՝ մթերքները բաժանումներին հասցնելու և, այսպիսով, հնարավորություն է ստեղծում աժան գներով պարեն մատակարարել:

Դալով էջմիածին, նա վերակազմում է եղբայրական օգնության ղեկավարությունը և հաշվապահությունը, ցուցակագրել է տալիս բոլոր գաղթականներին, ամեն մի ընտանիքի տալիս է նպաստի քրեդիտներ, որով և կանխում է բազմաթիվ թյուրիմացություններ, տրտմաններ և ղեղձարարություններ:

Այս ժամանակաշրջանի նրա գործունեության մեջ ակնառու տեղ է դրավում որքերի

հավաքումն ու խնամքը, որոնց թիվը հասնում է մինչև 800-ի: Կահավորվում են որբանոցները և նրանց հարակից դպրոցները, ապահովվում են ուսուցչական փորձառու և որակավոր կադրերով, հատուկ ուշադրություն է դարձվում առողջապահական պայմաններին և մաքրությանը:

Մինչ այդ՝ այստեղ այնտեղ անգործադրելի մնացած գումարները շարժման մեջ են դրվում և գործադրվում որոշված նպատակին: Չորեքշաբթի դիմումների համաձայն, պետությունից ստացվում են գաղթականության համար դպրոց բանալու հատուկ գումարներ, որոնք լրիվ օգտագործվում են:

Այս անդու և ամենօրյա աշխատանքի համար, որ տևում էր վաղ առավոտից մինչև ուշ երեկո, Չորեքշաբթի վարդապետը վճարում էր իր առողջությանը ու հիվանդանում է:

Գեորգ Ե. Կաթողիկոսը, գնահատելով և ունդուն և անձնվեր վարդապետի անշահախնդիր գործունեությունը, 1917 թվին նրան ձեռնադրում է եպիսկոպոս: էջմիածին միաբանությունը նրան ընտրում է վանական կառավարության նախագահ և Մայր տաճարի լուսարարապետ:

1921 թվին, Կաթողիկոսի հանձնարարությամբ, Սրբազանը մեկնում է Թբիլիսի՝ Վրաստանի թեմի եկեղեցական գործերը կարգավորելու 1922-ին գումարվում է Վրաստանի թեմի պատգամավորական ժողովը և միաձայնությամբ նա ընտրվում է թեմի առաջնորդ: 1925-ին կրկին վերընտրվում է, սակայն 1926 թվի վերջին հրաժարվում է Վրաստանի թեմի առաջնորդական պաշտոնից ու վերադառնում Մայր Աթոռ Ս. էջմիածին: 1927 թվին Համազգային եկեղեցական ժողովը նրան ընտրում է Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ: Գերագույն Հոգևոր Խորհրդի և Կաթողիկոսի կարգադրությամբ, 1926 թվին, նա մեկնում է Թբիլիսի՝ այնտեղ ծայր առած Ազատ եկեղեցական շարժումը դադարեցնելու: Թեմի նախկին առաջնորդի անունը և հեղինակությունը բավական էին, որ սկսած շարժումը ինքնին դադարեր: Չորեքշաբթի Սրբազանին հաջողվում է ազատ եկեղեցականներից վերցնել եկեղեցիները: Նրա այս գործունեությունը արժանանում է Կաթողիկոսի բարձր գնահատականին:

Այս պայքարի, վայրկյանների և անցյալների ընթացքին, Չորեքշաբթի Սրբազանը հենվում է հավատացյալների կամքի և ժողովրդական ընտրական իրավունքի վրա և ամենաջերմ ու աննահանջ կերպով պաշտ-

պանոսում ժողովրդավար սկզբունքներն ու իրավունքները: Խոստովանելով վարչարարությունից և հիմնվելով ժողովրդի իղձերի ու տենչերի, և նրանց ընտրական իրավունքի վրա, Չորեքյանին հաջողվում է համագործակցորեն վերացնել հավատացյալ համայնքներում տեղ դառած հիվանդագրին երևույթները:

1929 թվին Չորեքյան Սրբազանին տեսնում ենք Հյուսիսային Կովկասում՝ զբաղված նույն խնդիրներով, որոնցով կլանված էր նա Վրաստանի թեմում: Նա կարգավորում է Հյուսիսային Կովկասի եկեղեցական գործերը և վերադառնում Ս. Էջմիածին:

1932 թվին, երջանկահիշատակ Գեորգ Ն. ի մահվանից հետո, Ս. Էջմիածնում գումարվում է Ազգային-Եկեղեցական ժողով՝ կաթողիկոսի ընտրության կապակցությամբ: Ժողովը Գեորգ Սրբազանին ընտրում է Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

1938 թվի ապրիլի 10-ի գիշերը վախճանվում է երջանկահիշատակ Խորեն Ա. Կաթողիկոսը:

Այդ միջոցին Չորեքյան Սրբազանը Ս. Էջմիածնից բացակայում էր: Նա մարտի վերջերին մեկնել էր Լենինական և Թբիլիսի, Վեհապետի որոշ հանձնարարություններով և դեռ չէր վերադարձել:

Թբիլիսիից վերադառնալով Էջմիածին, նա Խորհրդի անդամ Արսեն Եպիսկոպոս Ղըրտճյանից ստանում է հանգուցյալ Կաթողիկոսի կողմից նախօրոք պատրաստված կոնդակը, որով նա նշանակվում էր Ամենայն Հայոց Հայրապետական Տեղակալ:

Տեղակալ Սրբազանը, Հոգևոր Խորհրդի անդամների հետ, շարունակում է Մայր Աթոռի ղեկավարման գործը մինչև 1941 թվականը:

1941 թվին հրավիրվում է Ազգային-Եկեղեցական ժողով, սակայն, Եպիսկոպոսների թվի պակասության և արտասահմանից ժամանած պատգամավորների ոչ բավարար քանակի պատճառով՝ կաթողիկոսական ընտրությունը հետաձգվում է: Ժողովը Գեորգ Սրբազանին ընտրում է Ամենայն Հայոց Հայրապետության Տեղակալ:

Այս օրերին սկսվում է Հայոց Հայրապետության կազմակերպման և ծաղկման մի նոր պատմական ժամանակաշրջան, երբ Գեորգ Սրբազանը հայտնաբերում է իր գործունեության լավագույն արդյունքները՝ Մայր Աթոռը պահելու և բարգավաճելու ուղղությամբ:

Իր ամենօրյա և անդուլ աշխատանքներով, Տեղակալ Սրբազանը ղեկավարում է տեղական և արտասահմանյան թեմերը, տալով պատշաճ հրահանգներ և ուղղություն: Մայր

Աթոռի ղեկավարությունն ղգալի և շոշափելի է դառնում ամենուրեք՝ թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ գաղութներում: Հատուկ պատվիրակություններ են ուղարկվում արտասահման՝ գաղութահայ եկեղեցիների և կրոնական կարիքների ուսումնասիրության համար: Կապը Մայր Աթոռի և գաղութահայության միջև հետզհետե ամրապնդվում է՝ տալով շոշափելի արդյունքներ:

Վրա է հասնում Հայրենական Մեծ Պատերազմը: Գերմանական Ֆաշիստական հորդանները, իրենց բազմաթիվ բանակներով, անակնկալ, հարձակվում են մեր փառապանծ Հայրենիքի՝ Սովետական Միության վրա:

Սրբազան Տեղակալը իսկույն կանգնում է մեր Հայրենիքը պաշտպանելու դիրքերում և իր կոչերով, կոնդակներով ու նամակներով, ինչպես Մայր Հայրենիքում, նույնպես և Սփյուռքի հայության մեջ, կազմակերպում է Հայրենիքը պաշտպանելու օգնությունը:

Այստեղ անհրաժեշտ է նշել Հայաստանյայց Եկեղեցու պատմական մեկ առաքելությունը, որ պահպանվել է Մայր Աթոռի գահակալների կողմից՝ Ս. Գրիգոր Լուսավորչի օրերից սկսած մինչև վերջին ժամանակները: Հայ Եկեղեցին միշտ կանգնել է իր ժողովրդի և իր պետականության կողքին և ամենաշեղծ պաշտպանությունը և աջակցությունը ցուցաբերել Հայրենիքի ծանր օրերին: Մեր պատմությունը հարուստ է Հայ Եկեղեցու և հայ եկեղեցականի անօրինակ զոհաբերության փաստերով՝ հանուն հայ երկրի, հայ Հայրենիքի և հայ ժողովրդի:

Երբ 1941 թվի հունիսի 22-ին դարանամուտ թշնամին դավաճանորեն ներխուժեց մեր սահմանները, Տեղակալ Սրբազանի առաջին խոսքն եղավ. «Հայրենիքի հետ և Հայրենիքի համար»:

1943 թվին նա կոչ ուղղեց համայն հայության՝ «Մասունցի Դավիթ» տանկային շարասյունը ստեղծելու, կազմակերպելու և մեր փառապանծ Կարմիր Բանակին տալու համար:

Արտասահմանյան ողջ հայությունը, և այն էլ բոլոր երկրներում և գաղութներում, իր լայն աջակցությունը բերեց այս նվիրական ու մեծ գործին: Այդ միջոցներով կազմակերպված «Մասունցի Դավիթ» տանկային շարասյունները ռազմաճակատ դուրս եկան և կռվեցին մոլեգնած հորդանների դեմ:

«Էջմիածին» ամսագրի 1944 թվի նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համարում, Տեղակալ Սրբազանը «Ս. Էջմիածնի պատվիրակության աշխատանքները» խորագիրը կրող իր մի հոդվածում գրում էր. «Մեր ամեն մի

հավատացյալ, իր սրտի և հոգու խորքում երկու նկար ունի դրած. դրանցից մեկը Մայր Հայրենիքի նկարն է, իսկ մյուսը՝ Մայր Աթոռը:

Տեղակալության շրջանի կոչերն ու կոնդակները, հորդորները համայն հայ ժողովրդին, լի են նմանօրինակ արտահայտություններով, որոնք բացատրում են այն մեծ հայրենասիրությունը, որ իր տարիքին զուգընթաց, կուտակել է իր հոգում մեր ծերունազարդ Հայրապետը:

Տեղակալ Սրբազանի այսպիսի եռանդուն և անդադրում գործունեությամբ խանդավառված էր հավատացյալ ողջ ժողովուրդը՝ Մայր Հայրենիքում ու գաղութներում:

Մեր հաղթանակների շունչն ու ոգին, Գիներալիսսիմուս Ստալինը, 1945 թվի ապրիլի 19-ին ընդունեց Տեղակալ Սրբազանին և ընձեռնեց մի շարք դոկտրինային և արտոնություններ՝ Հոգևոր Զեմարանի բացումը, սեփական տպարան ունենալու արտոնությունը, համազգային եկեղեցական ժողովի գումարումը և այլն:

Մեծ Առաջնորդի առանձնաշնորհումները և բարեացակամ ուշադրությունը՝ Մայր Աթոռ վերակառուցելու ուղղությամբ, անջնջելի կմախք բոլոր ժամանակաշրջաններում՝ հայ հավատացյալների՝ ներկա և գալիք սերունդների սրտերում: Այս իսկ հանգամանքը արտասահմանի մեր գաղութներում ստեղծեց խանդավառություն, երախտագիտություն դեպի հանստուն Առաջնորդը, և բոլորին ոտքի հանեց և լծեց աշխատանքի, հանուն Մայր Աթոռի վերածննդի և Սովետական Հայրենիքի է՛լ ավելի ծաղկման ու զարգացման:

1945 թ. հունիսի 16-ին Մայր Աթոռում գումարվեց Ազգային-եկեղեցական ժողով:

Այս ժողովը իր կազմի լիակատարությամբ գերազանցեց մեր նախկին ժողովները: Ժողովին մասնակցում էին Մայր Հայրենիքի և Սփյուռքի թեմերի բոլոր ներկայացուցիչները և առաջնորդները, ինչպես և Ս. Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքությունները: Ժողովը առանձին փայլ և հմայք ստացավ մեր եկեղեցու ամենաականավոր սյուներից մեկի՝ Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Ա.ի մասնակցությամբ: Զեմարանի երկու նախկին սաներ, դասընկերներ, երկու օժակիցներ, որպես Հայ եկեղեցու

ուխտյալ և երդվյալ առաքյալներ, երկու դասավոր կաղնիների նման կողք կողքի եկան:

Առաջին իսկ հանդիպումից և խորհրդակցություններից, հնչեց հայ ժողովրդի միասնականության կոչն ու գաղափարաբանությունը, — Սովետական Հայրենիք և Մայր Աթոռ: Այս կազմեց ժողովի ոգին ու նշանաբանը: Ս. Էջմիածնի զանգակների քաղցր և փառքավոր դողանջների տակ, նոր շունչ առավ Մայր Աթոռը: Ազգային միասնականության գաղափարները ներծծվեցին ամենքից: Հոգու մեջ: Հայոց եկեղեցին, իր պատմական ողջ անցյալում չէր տեսել այսպիսի միասնականություն:

Պատմական առաջին դեպքն էր, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը մասնակցում էր Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառում գումարված Ազգային-եկեղեցական ժողովին. ոչ միայն նա մասնակցում էր, այլ և իր սրտի պես մաքուր և անաղարտ էր պահում հայ Հայրենիքի, հայ ժողովրդի միասնականության գաղափարը: Տիրում էր անսահման խանդավառություն:

Սովետական Մեծ Միության և Սովետական Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչները անձամբ ներկա էին Ազգային-եկեղեցական ժողովին:

Սրբազան Տեղակալն իր գործունեությամբ Հայոց եկեղեցին և նրա հեղինակությունը բարձրացրեց ըստ ամենայնի, իմաստավորելով նրա պատմական նշանակությունը և առաքելությունը Հայրենիքի պաշտպանության սրբազան գործում:

Այս մեծ և փառավոր գործն է, որ որպես լուսապսակ, հավերժորեն պիտի մնա և հիշվի մեր եկեղեցական պատմության մեջ և ուղեցույց հանդիսանա Մայր Աթոռի գահակալների համար:

1945 թվի հունիսի 22-ին նշանակվեց Կաթողիկոսական ընտրությունը: Մի խորին վեհություն էր տիրում տաճարում. միասնականության վեհությունն էր այդ, որ պարտադեպ էր ամենքին:

Եվ ընտրվեց արժանավորագույն կաթողիկոսը՝ Ս. Գեորգ Սրբազան Արքեպիսկոպոս Զորեքչյանը: Ընտրվեց միաձայն, նույն միասնականության հոգեպարար վեհության մեջ: Դողանջեցին զանգերը և հրճվանքի ալիքները դուրս թույն տաճարից՝ վարարելով հավաքված և սրտատրոփ սպասող բազմության: Նույն թվի հունիսի 24-ին տեղի ունեցավ Կաթողիկոսական Սուրբ Օծումը:

(Շարունակելի)